ԱՅՍՕՐ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՄԻՔԱՅԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

01.11.2023 18:51

Այսօր փաստաբանական համայնքի ներկայացուցիչներն այցելեցին Եռաբլուր զինվորական պանթեոն, խնկարկեցին և ծաղիկներ խոնարհեցին Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված Միքայել Դանիելյանի շիրիմին:

Նոյեմբերի 1-ը փաստաբան Խաչիկ Դանիելյանի որդու՝ Միքայել Դանիելյանի հիշատակի օրն է:

Միքայելն անձնվիրաբար կռվել է Մարտակերտի դիրքերում, պայքարել հայ զինվորին վայել ոգով և հանուն հայրենիքի մարտնչած զինվորի հիշատակը միշտ վառ պիտի մնա ապրողների հուշերում:

Միքայել Դանիելյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական Ծառայություն» և «Արիության Համար» շքանշաններով:

Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակն անմար պահելն է: Փաստաբանների պալատն իր պարտքն է համարում մշտապես լինել գործընկերների կողքին և Փաստաբանների պալատի նախաձեռնության համաձայն ամեն տարի փաստաբանական համայնքն իր հարգանքի տուրքն է մատուցելու մեր հերոսների ընտանիքներին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })